և այլ որպիսութիւն սորա...։ Սա ոչ է նորոգ եկեալ յարևելից. այլ ամօք բազմօք կացեալ ի լեհաստան, ուստի և կապայն է կոճակաւոր, որպէս ֆոէնկ փրէլաթից...։ Դարձեալ, է աստ գրեթէ յերեսուն ամաց հետէ հրէայ մի ստամպօլցի եղեալ քրիստոնեայ կոչեցեալ սինեօռ անտոնիօ գօսթանցի. ճապի հայոց ժամուն, և փրօփականտայի մայիսթրօ վասն եբրայական լեզուին. այր խորամանկ, և պաշտօնեայ սանթօֆիցին...։ Լուայ զկործանումն մոսկովու թագաւորին, զի բանտարկեցին զնա, և ի տեղի նորա թագաւորեցուցին զկին նորա, պատճառաւ զի կամէր լօթռան առնել զմոսկովսն. և զի զատոյց զնոսա ի դաշնադրութենէ նէմցէին. և արար միաբանութիւն ընդ պուուշին թշնամւոյն մոսկովաց. ուստի յետս կոչեցին զզօրսն յօգնութիւն պուուշին...։

[Հ. Մկրտիչ Անանեանց]

[ի Հռովմ]

ՄԼԹ.

Բերայի Ս. Անտոն և Ս. Երրորդութիւն եկեղեցիները՝ հանդերձ իրենց վանքերով, ինչպէս նաև ուրիշ մեծամեծներու տուներ՝ ահարկու հրդեհի մը ճարակ կ՚երթան։ Ժանտամահն ալ կը մասնակցի իր աղէտներով։ Ահա առ այս՝ երկու թուղթեր։

Ա.

Գերաւեղծար և գերյարգելի եղբօր իմում
Տեառն Տեառն Հայր Մկրտիչ վարդապետին ողջոյն

... յայսմիկ գիշերի ի հինգերորդ ժամու գիշերոյ՝ յանզգուշութեան խոհարարի սրբոյն անտոնի ի տեօրթ էօլ աղըզ՝ բորբոքեցաւ նախ աշխանայն։ Ապա վաղվաղակի յետ ոչ ամբողջ այրելոյն զսուրբ անտոնի վանսն, էանց ի տուն մուրատճայենց անտոն վ. տես դու զդժբախտութիւն աշխարհիս. զի թոռունք մուրատճայի ըմբոնեալ ի մահտարաժամէ՝ էին յանկողնի. և անտոն վարդապետ փախուցեալ ի յօրթագեղ. նոյնպէս և ոմանք ի նոցանէ. և անշահք մնացեալք ի տան. վասն որոյ կանայք և մանկունք մազապուրծ լեալք, տունն ամենայն ալխիւք յաճիւն դարձաւ։ Ցետ այնորիկ սուրբ անտոնի եկեղեցին հանդերձ վանուք այրեցաւ։ Ապա ի սաստկանալ բորբոք հրոյն, էանց առ մեզ, և զմեր եկեղեցին սուրբ Երրորդութեան հանդերձ տամբք և վանուք յաճիւն դարձոյց։ Ես ոչ գտայ ի տան. մեր կարապետն ծերացեալ յոյժ հազիւ կարաց զանձն ապրեցուցանել, և զոմանս ինձ հարկաւորս. այրեցաւ տունն հանդերձ ալխիւք։ Ապա յառաջ ընթացեալ հրոյն մինչև ի Սարայբն օսմանցոյն՝ զերկու կողմանս յաճիւն դարձոյց. դղրդեցաւ քաղաքն ամենայն, զի այնպիսի անցք ոչ երբէք պատահեալ էր մերոյս պէկօղլուի։ Բայց վայն այս էր՝ զի ամենայն ֆրէնկք՝ յահէ ժանտամահու փախուցեալք ի գիւղօրէս, ոչ ոք գտաւ սատարիչ առ ի զտունս պահել, և մինչև նոքա ի գիւղից իջին ի քաղաքն, ահա այն գեղեցիկ պէկօղլին՝ գտաւ դարձեալ ի յաճիւն։... ոմն ի խանից դուլիխանին եկն ի կոստանդնուպօլիս. և յետ երից ամաց՝ յաւուրս յայսոսիկ հարաւ ի ժանտամահէ և մեռաւ... ասեն թէ միայն ի մէջ միոյ տոպրակի եղեալ զակունսն. և որպիսի ակունք, սպիտակ էլմասք, և կարմիր եաղուտք, կշռեցին. և էր կշռոց երկոտասան օխխայից. թող զսպիտակ տիլպէնտս՝ որ աւելի քան զ1000 քսակս, և զայլ զգեստս բեհեզեայս գործեալս ի հնդիկս։ Զայս ամենայն յարքունիս առին...։

Զնչին ծառայ
Ա[թանաս] վ. և անարժան եպս.

ի սեպտեմբերի 20, 1762

[ի Կ. Պոլիս]